

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

Յիսուս Բրիստոսի հրաշափառ յարութենէն յիսուն օրեր ետք, տեղի ունեցաւ մեծ հրաշք մը եւս՝ Սուրբ Հոգին կրակէ լեզուի կերպարանքով իջաւ առաքեալներու վրայ: Այս տօնը նաեւ յայտնի է մեզի Պէնտէկոստէ անունով, որ Յունարենէն թարգմանաբար կը նշանակէ «յիսուներորդ օրը»: Բրիստոսի յարութենէն յիսուն օր ետք տեղի ունեցաւ Սուրբ Հոգիի առաքեալներու վրայ իջնելու կարեւոր եւ հրաշք իրադարձութիւնը:

Սուրբ Հոգին, Սուրբ Երրորդութիւնը ամբողջացնող շղթան է եւ անբաժանելի մասը: Երբ Աստուած ստեղծեց աշխարհը Սուրբ Հոգիի միջոցաւ կատարուեցան Տիրոջ հրահանքները: Մարիամ Աստուածածնի յղիացումը Գաբրիէլ հրեշտակապետի ատեմով Սուրբ Հոգիի միջոցակատարուեցաւ: Բրիստոսի մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգին աղանակերպ իջաւ անոր վրայ: Բազում են այսպիսի օրինակները Աստուածաշունչի մէջ, ուր Սուրբ Հոգիի դերը անդրժելի է եւ ակնյայտօրէն տեսանելի:

Բրիստոսի յարութիւնէն ետք աշակերտներուն պատուիրեց չհեռանալ Երուսաղէմէն մինչեւ Պէնտէկոստէի տօնը: Ան խոստացեր էր առաքեալներուն Սուրբ Հոգին դրկելու մասին: Տօնին օրը առաքեալները հաւաքուած էին նշելու համար հրեական Շաուօթը (Պէնտէկոստէ) երբ երկինքէն զօրաւոր ձայն մը լսուեցաւ եւ անոնց

զլուխներուն վրայ լեզուներ երեւցան կրակի կերպով եւ անոնք սկսան տարբեր լեզուներով խօսիլ: Այս հրաշքի մասին կը կարդանք Նոր Կտակարանի, Գործք Առաքելոց գիրքի երկրորդ զլուխի մէջ:

Այս տարի Հոգեգալստյան տօնը Հայ Առաքելական եկեղեցին պիտի նշէ Մայիս 28-ին: Յատուկ շարականներ եւ աղօթքներ գրուած են այս տօնի կապակցութեամբ: Անոնցմէ ամենայայտնին «Առաքելոյ Աղանոյ» շարականն է որ Մովսէս Խորենացին գրած է:

*«Առաքելոյ աղանոյ իջանելով մեծաձայն  
հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն  
լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի  
զաշակերտսն. Մինչդեռ նստէինք ի սուրբ  
վերնատանն:»*

*Թարգմանութիւն.*

*«Երկնառաքեալ Աղանին բարձրաձայն  
հնչմամբ իջաւ Աստուծմէ Փայլուն լոյսի  
նմանութեամբ, անսպառ կրակով զինեց  
աշակերտները. Երբ նստած էին սուրբ  
վերնատանը:»*